# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

## ԼԵՌՆԱՊԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

✉Լոռու մարզ, գ.Լեռնապատ, 27 փող. 7/6 ☎ 0322 68781

<29 > հունվարի 2015թ.

Թիվ Ե-08 /15

ՀՀ Լոռու մարզպետ՝ Ա. Նալբանդյանին

Հարգելի պարոն մարզպետ.

Ղեկավարվելով << ՏԻՄ>> ՀՀ օրենքի 30 հոդվածի 8-րդ կետով՝ Ձեզ ենք ներկայացնում Լեռնապատ համայնքի ավագանու 27.01.2015թ.-ի ավագանու N1-Ն, N2-Ա որոշումները:

Առդիր 4--էջ:

Լեռնապատի գյուղապետ՝ Ս. Աբազյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լեռնապատ,

## ՈՐՈՇՈՒՄ

27 հունվարի 2015 թվականի N1-Ն

### ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014թ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11- Ի <ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ> ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<ՏԻՄ>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-Ին մասի 3-րդ կետով,<<ՀՀ բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով և <Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածով՝ Լեռնապատ համայնքի ավագանին որոշում է.

1. Լեռնապատ համայնքի ավագանու 2014թ դեկտեմբերի 11-ի <<Լեռնապատ համայնքի 2015 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N56-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն թիվ 2-6 հատվածների/հավելված/:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| ՍԵՐՅՈԺԱ ԱԲԱՋՅԱՆ | [signature] | | |
| ԱՐԱՅԻԿ ԹՈՐՈՍՅԱՆ | [signature] | | |
| ԱՐԱՅԻԿ ՔՈՉԱՐՅԱՆ | [signature] | | |
| ԱՐԿԱԴԻ ԱԲԱՋՅԱՆ | [signature] | | |
| ՖՐՈՒԴԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ | [signature] | | |
| ՄՀԵՐ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ | [signature] | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ [signature, stamp: ԼԵՌՆԱՊԱՏԻ ... 07300807] ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

Հավելված

Լեռնապատ համայնքի

27.01.2015թ.N1-Ն որոշման

# 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Եկամուտներ-------- -------------47701,6 հազ. դրամ

ծախսեր--------------- ------------ 59106,5 հազ. դրամ

տարեկան ազատ մնացորդ------11404,9հազ. դրամ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈւ ՄԱՐԶԻ
ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Լեռնապատ համայնք, գ.Լեռնապատ,
Լեռնապատի գյուղապետարան 27 փողոց 7/6
հեռ. /0322/- 68781

# ՈՐՈՇՈՒՄ

27 հունվարի 2015 թվականի N 2 -Ա

## ԼԵՌՆԱՊԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ՏԻՄ օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ կետով, ՀՀ կառավարության 2011 թ. դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգի 17-րդ կետով, Լեռնապատ համայնքի ավագանին

## ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հավանություն տալ Լոռու մարզի Լեռնապատ գյուղական համայնքի վարչական տարածքում, համայնքային սեփականություն հանդիսացող 0145-0035 ծածկագրից 0.01 հա բնակավայրերի այլ հողամասի նպատակային նշանակությունը, հեռուստատեսության արդիականացման ծրագրի շրջանակներում, թվային հեռուստաաշտարակ կառուցելու նպատակով, էներգետիկայի կապի տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի նպատակային նշանակության, կապի հողերի գործառնական նշանակության փոխադրելու առաջարկությանը:

2. Համայնքի ղեկավարին՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխման առաջարկություն վերաբերյալ կազմված հողաշինարարական գործը ներկայացնել հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման ՀՀ Լոռու մարզային հանձնաժողովի քննարկմանը:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| ՍԵՐՅՈԺԱ ԱԲԱՋՅԱՆ | [signature] | | |
| ԱՐԱՅԻԿ ԹՈՐՈՍՅԱՆ | [signature] | | |
| ԱՐԱՅԻԿ ՔՈՉԱՐՅԱՆ | [signature] | | |

| | | | |
|---|---|---|---|
| ԱՐԿԱԴԻ ԱԲԱՋՅԱՆ | | | |
| ՖՐՈՒԴԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ | | | |
| ՄՀԵՐ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ